Արձանագրության 3

«Մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/119 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 01.07.2019թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Սարգսյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գյուրջյան /գնահատող/
Գ. Օրբելյան /բացող/, Լ. Բաբայան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան
Բացակայում էր՝ Ծ. Մկրտչյան /գնահատող/

1. Պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Գ. Սարգսյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություն, որի չափը չի գերազանցում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը, իսկ «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ծանուցվել էր 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Գ. Սարգսյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Լայթ Լայֆ» ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

3. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/119 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ. Սարգսյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-19/119 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Լայթ Լայֆ» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ,

3.2 Հաշվի առնելով, որ ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել՝ անգործության ժամկետ կիրառելի չէ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Գ. Սարգսյան)

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4,դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Գ. Սարգսյան

Անդամներ՝ ---------- Ա. Գյուրջյան

---------- Գ. Օրբելյան

---------- Լ. Բաբայան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան